

Լեզվական հասանելիության վերաբերյալ բողոքի գործընթացը

Երկլեզու ծառայությունները

Ձոռի փոխհատուցման և պետական հայցի խորհրդի քաղաքականությունն է այն բոլոր անձանց, այդ թվում նրանց, ովքեր անգլերենով չեն տիրապետում կամ սահմանափակ են տիրապետում, տրամադրել հավասար ծառայությունների հասանելիությունը և տեղեկատվությունը՝ Dymally-Alatorre երկլեզու օրենքին համաձայն: Այդ նպատակով՝ մենք ձգտում ենք տրամադրել կենսական ձևաթղթերը և փաստաթղթերը հավելյալ անգլերենին՝ առավել հաճախ օգտագործվող լեզուներով: Բողոքի ձևաթղթի վերաբերյալ Ձեր մեկնաբանությունները կօգնեն մեզ հասնել այդ նպատակին: Բոլոր տեղեկությունները գաղտնի են:

Լեզվական հասանելիության բողոքները

Նահանգային գերատեսչություններից պահանջվում է տեղեկություններ կրել տեղեկություններ իրենց լեզվական հասանելիության բողոքի գործընթացի մասին և բողոքի ձևաթուղթ իրենց հանրային գրասենյակներում և մատչելի՝ իրենց գործակալության գլխավոր կայքէջում: Բողոքի ձևաթուղթը գտնվում է հետևյալ հասցեյով՝

[Հասանելիության ծառայություններ Ձեր լեզվով. Բողոքի ձևաթուղթ](#)

Եթե նահանգային գերատեսչությունը հաճախորդին չի տրամադրել հայցվող թարգմանված նյութերը կամ բանավոր թարգմանչական ծառայությունները, ապա հաճախորդը կարող է պահանջել խոսել մենեջերի հետ:

Եթե հաճախորդին թվում է, թե նահանգային գերատեսչությունը ի վիճակի չէ աջակցել կամ պահանջվող լեզվի հասանելիություն տրամադրել, հաճախորդը կարող է կապվել Կալիֆոռնիայի մարդկային ռեսուրսների վարչության (CalHR) հետ՝ լրացուցիչ աջակցության համար: CalHR-ը հաստատել է լեզվական հասանելիության բողոքի ոչ պաշտոնական գործընթաց, որը հանրությանը հնարավորություն է տալիս իրենց բողոքները այլ ուղղությամբ ներկայացնել, եթե իրենց

Լեզվական հասանելիության վերաբերյալ բողոքի գործընթացը

Թվում է, որ համապատասխան լեզվական ծառայություններ չեն ստացել Կալիֆոռնիայի նահանգային գերատեսչություններից: CalHR-ը հաստատել է հետևյալ անվճար հեռախոսահամարը՝ լեզվական հասանելիության վերաբերյալ բողոքներ ստանալու համար՝

1-866-889-3278

Այս հեռախոսահամարը հաճախորդին կմիացնի ձայնագրիչին, որտեղ հաճախորդը կկարողանա հաղորդագրություն թողնել՝ բացատրելով իր բողոքի մանրամասները:

**Լեզվական
հասանելիության
բողոքները
(շար.)**

Ձայնագրիչը կպարունակի ցուցմունքներ հետևյալ լեզուներով՝

անգլերեն
արաբերեն
հայերեն
կանտոներեն
ֆարսի
ճապոներեն
կորեերեն
մանդարին
փունջաբերեն
ռուսերեն
իսպաներեն
տազալոգ
վյետնամերեն

Եթե հաճախորդը չի խոսում վերոհիշյալ լեզուներից մեկով, նրանք պետք է դիմեն CalHR-ի երկլեզու ծառայությունների ծրագրին՝ (916) 324-0970 հեռախոսահամարով: CalHR-ը կփորձի պարզել, թե ինչ լեզվով է հաճախորդը խոսում և գտնել իրենց մայրենի լեզուն տիրապետող որակավորված թարգմանիչ:

Հեղվական հասանելիության վերաբերյալ բողոքի գործընթացը

Եթե հաճախորդը լսողության դժվարություն ունի, ապա կարող է կապվել Կալիֆոռնիայի հերթափոխի ծառայությունների հետ՝ 711 հեռախոսահամարով աջակցություն ստանալու համար:
